

765

82

7-73

1913

2011

2003

ԿՈՆԱՆ ԴՅՅԼ

61


ՎԵՐԱԴԱՐՁ ԴԷՊԻ

ՀԱՅՐԵՆԻՔ

ՊԱՏՄՈՒԱԾՔ

Բ. տպագրութիւն

Թարգմանեց
Նիկողայոս ք. Բոսնակեան



82
7-73

АНЪ Н-Д.

Авакова.

Ն.ՆԱԽԻՋԵՒԱՆ

Տպ. Ս. Յ. Աւագեանի.

1913

82
Դ-73

ԿՈՆԱՆ ԴՕՑԼ


ՎԵՐԱԴԱՐՁ ԴԷՊԻ

ՀԱՅՐԵՆԻՔ

ՊԱՏՄՈՒԱԾՔ

Բ. տպագրութիւն

Թարգմանեց
Նիկողայոս քհ. Բունակեան



НАХИЧЕВАНЬ Н-Д. Ն.-ՆԱԽԻՉԵՒԱՆ
Тип. С. Я. Авакова. Տպ. Ս. Յ. Ասազեանի.
1913

36857 ա. հ.



20553-60 Բ

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ

Դարուն էր, 528 թուականին Քաղկեդոնի ասիական և Կոստանդնուպոլսի Եւրոպական ծովափի մէջտեղում մի վաճառականական փոքրիկ առաքտատանաւ էր երթեկում: Այն առաւօտը, որի մասին մենք պիտի խօսենք, այսինքն Ս. Գէորգի տօնի օրուայ վաղ ժամին, նաւի տախտակամածի վերայ բազմաթիւ ուխտաւորներ էին խմբուել, նրանք բոլորը ուղևորւում էին դէպի մեծ քաղաքը, որպէսզի մասնակցեն կրօնական և աշխարհական հանգէսներին, ի պատիւ հռչակաւոր նահատակին, որովհետեւ այս տօնը տրեւեւ հանգիստը նշանակուած բոլոր միւս տօներէն առաւել նշանաւորն էր: Օրը հիւսնալի էր. քամին մեղմ փչում էր, հէնց զրա համար էլ նաւարկողները կատարեալ տօնական տրամադրութիւնով կարող էին հանդարտ, առանց որեւէ վրդովման ու տանջանքի հրճուիլ ու զուարճանալ այն հետաքրքիր առարկաներով, որոնք պատահում էին նրանց աշխարհի ամենամեծ և գեղեցիկ մայրաքաղաքի ճանապարհի վրայ: Նաւը

անցնում էր նեղուցով. նրա աջ կողմում տարածւում էր ասիական ավեր, շրջապատուած սպիտակ ծառերով և բազմաթիւ շքեղ ու սիրուն ամառանոցներով, որոնք ծառերի կանաչների միջից երևում էին, ծածկելով զառիվայրը: Առաջից երևում էին Պրինցեսեան կղզիները, զըմբուխտի պէս կանաչ, որոնք բարձրանում էին Մարմարայի խիտ շափիւղային ու կապուտակ ծովի վերայ, հրբեմն էլ ծածկելով մայրաքաղաքի տեսարանը: Երբ առագաստանաւը իր յետեւը թողեց բոլոր կղզիները, այն ժամանակ ուխտաւորների աչքի առաջ յանկարծ կանգնեց մեծ քաղաքը և ամբոխով ծածկուած տախտակամածի վերայ լսուեցին հիացմունքի ու զարմանքի ձայներ: Քաղաքը, որ դասաւորուած էր տեքրասնեքով՝ հիանալի տեսարան էր ներկայացնում: Պղնձեայ հարիւրաւոր կտուրները և ոսկեզօծ արձանները արևի ճառագայթների մէջ փայլում էին, իսկ ամենից վեր բարձրանում էր Սուրբ Սոփիայի ոսկեայ կաթողիկէն: Կոստանդնուպօլիսը պարզ երևում էր անամպ երկնքի վերայ իր հմայիչ գեղեցկութեամբ:

Փոքրիկ նաւի առջևի մասում, կանգնած էին հրկու ուղևորներ. նրանցից մէկը տասը կամ տասներկու տարեկան մի սիրուն տղայ էր, սև գանգուր մազերով ու սև վառվառն աչքերով, կեանքի ուրախութեան յոյսերով լցուած, իսկ միւսը՝ նիհար դէմքով ալիզարդ մօրուքով ծերունի էր. նա տեսնելով, որ իր պատանի ուղեկիցը մեծ հետաքրքրութեամբ ու անպատմելի բաւականութեամբ նայում էր դէպի գեղեցիկ հեռաւոր քաղաքը և բազմաթիւ նաւերը որոն-

ցով լցուած էր անձուկ նեղուցը, նրա խոփող դէմքը փայլեց ժպիտով:

— Տեսէք, տեսէք, բացականչեց պատանին: Ինչպիսի մեծ ու կարմիր նաւեր են: Ահա նրանք դուրս են գալիս նաւահանգստից: Ձերդ արժանապատուութիւն, անշուշտ ամբողջ աշխարհումս չկան սրանց նման նաւեր:

Ծերունին—որ Անտիօքի Սուրբ Նիկիֆորի վանքի վանահայրն էր, իւր ձեռքը դրեց պատանու ուսին ու ասաց:

— Լե, կամաց ու ցածր խօսիր, քանի որ մենք դեռ մօրդ հետ տեսնուած չենք, դրա համար մինչև այդ օրը պարտական ենք պահուիլ ու խուսափել մարդկանցից: Այո, ճշմարիտ է, կարմիր մարտանաւերը գեղեցիկ են ու մեծ. դրանք կայսերական պատերազմական նաւեր են, որոնք վերադարձել են Թէոդոսիայի նաւահանգստից: Այդ կանաչ հրուանդանի յետևում երևցածը Ոսկեղջիւրն է. ահա այնտեղ առևտրական նաւեր են կանգնում: Լե, այժմ դու քո աչքերը դարձրու շինութիւնների շղթաների վրայ. տեսնում ես արդեօք այնտեղ մեծ եկեղեցու յետևում ծովի երկարութեամբ կոթողների մի երկար շարք է երևում: Այդ կեսարների պալատն է:

Տղան մեծ ուշադրութեամբ նայում էր ծերունու ցոյց տուած ուղղութեամբ:

Յանկարծ նա շնչաց—Եւ իմ մայրը այնտեղ է:

— Այո, Լե, քո մայրը Թէոդորա կայսրուհին է, և նրա ամուսինը, մեծն Յուստինիանոսը, այդ պալատումն են ապրում:

Հարցասէր տղան աչքերը յառած նայեց ծերունու դէմքին:

— Հայր Ղուկաս, դուք ճշմարտապէս հաւատացած էք, որ մայրս ինձ տեսնելով պիտի ուրախանայ: Վանահայրը շուռ եկաւ, որ չտեսնէ նրա հարցական աչքերը:

— Մենք առայժմ ոչ մի բան կարող չենք ասել այլ միայն կարող ենք փորձել: Ենթադրենք որ այնտեղ քեզ համար տեղ չլինի, այն ժամահակ միշտ ուրախութեամբ կընդունեն քեզ Սուրբ Նիկիիֆորի եղբայրների թուում:

— Հայր Ղուկաս, ինչո՞ւ դուք վաղորօք չյայտնեցիք նրան իմ գալու մասին և նրա կարգադրութեանը չսպասեցիք:

— Լե, պատասխանեց ծերունին, երկար ժամանակ նա քեզանից հեռու լինելով կարող էր քեզ մերժել և չընդունել, և իմանալով որ մենք մտադիր ենք այցելել մօրդ, կայսերական սուրհանդակը մեզ չէր թողնիլ մեր նպատակին հասնելու և յետ կըդարձնէր: Բայց երբ նա քեզ տեսնէ, քո աչքերը որ այնքան նման են նրա սեպհական աչքերին, և քո դէմքը նման է այն մարդու դէմքի գծագրութեան, որին նա սիրում էր, ես հաւատացած եմ, որ կըբանայ իւր սիրտը քո առաջ, եթէ նա քարացած չէ: Մինչև անգամ տսում են թէ կայսրը ոչ մի բանում կարող չէ մերժել նրան: Նրանք գաւակ չունին, և քո առաջը Լե', մեծ աղագայ կայ: Տես, երբ այդ օրերին հասնես, մի մոռանար Սուրբ Նիկիիֆոր վանքի թշուառ եղբայրներիդ, որոնք ընդունեցին քեզ, երբ դու ամբողջ աշխարհում բարեկամներ չունէիր...

Ծերունի վանահայրը խօսում էր մի առանձին աշխոյժով և թէև աշխատում էր ցոյց տալ ուրախ տրամադրութիւն, բայց որքան նա մօտենում էր մայրաքաղաքին, այնքան էլ նրա խռովւած ու յուզուած դէմքի վրայ նկատուում էր մի ինչ որ կասկած՝ իւր մտքումը դրած գործի յաջողման նկատմամբ: Այն, ինչ որ Անտիոքի խաղաղ վանքերում ծերունու աչքին երևում էին հասարակ, բնական, այժմ տեսնելով Կոստանդնուպոլսի ոսկեզօծ գմբէթները, որոնք փայլում էին նրա աչքի առաջ, դարձան նրա համար կասկածելի ու անհասկանալի:

Տասը տարի դորանից առաջ, դժբաղդ կիսը, որի անունը արևելքում ինչպէս նախատինք հնչւում էր, և որտեղ նա յայտնի էր ինչպէս իւր գեղեցկութեամբ, այնպէս էլ իւր արատաւոր կեանքով, վանքի դարպասի մօտ, համոզեց տրեղաներին, առնել իւր մանուկ որդուն իրանց խնամքի տակ: Ահա այն օրից մանուկը մնացած էր այնտեղ: Իսկ ինքը թէոդորան մայրաքաղաք վերադարձաւ և բաղդի անւի շուռ գալու շնորհիւ դրաւեց դէպի իրեն Յուստինիան գահաժառանգի ուշադրութիւնը, իսկ յետոյ, նորա խորին սէրը: Իւր հօրեղբօր մահուանից յետոյ երիտասարդ արքայազունը ամբողջ աշխարհի ամենամեծ միապետը դարձաւ, և ոչ միայն թէոդորային բարձրացրեց կայսրուհու աստիճանին, այլ և նրան տուաւ անսահման իշխանութիւն՝ հաւասար իւր կարողութեանը և անկախ իրանից: Եւ այս կինը սեպհական արժանիքի զգացում ձեռք բերելով, այն ամենից կտրեց իրան, որը կապում էր նրան անցեալ կեանքի հետ, և շու-

տով ապացուցեց, որ նա կարող է լինել մեծ
կառավարչուհի, առաւել հզօր և առաւել իմաս-
տուն, քան թէ իւր ամուսինը, բայց միևնոյն
ժամանակ--քարասիրտ, վրէժխնդիր և անդըր-
դուելի. բարեկամների նկատմամբ՝ պաշտպան ու
զօրաւիգ, իսկ թշնամիների նկատմամբ՝ ահ ու
սարսափ: Ահա ինչպիսի կնոջ մօտ էր գնում
Ղուկաս Անտիոքացին, տանելով իւր հետ նրա
մոռացուած որդուն, պատանի Լեւին: Եթէ թէո-
դորան երբ և իցէ մտաբերէր այն օրերը, երբ
նրան թողեց Աֆրիկայի Պենտապօլսի կառավա-
րիչ Եպիբրուան և նա ստիպուած էր ոտքով գնալ
Փոքր Ասիայի միջով և թողնել իւր մանկանը
աբեղանիւրի մօտ, միշտ կաշխատէր համոզել ինքն
իրան, որ աբեղաները անջատուած լինելով ար-
տաքին աշխարհից, երբէք չեն կարող շփոթել
թէոդորա կայսրուհու անունը խղճալի պանդուխտ
թէոդորայի հետ և յայտնել նրա որդու գոյութեան
մասին ոչինչ չի իմանալ:

Փոքրիկ առաքաւստանաւը երբ Ալլոպոլսի
հրուանդանը անցաւ, նրա առաջ ընկած էր Ոս-
կիջիւրի երկայնաւուն ու կապուտակ շերտը:
Թէոդոսիայի բարձր պարիսպը ձգուած էր նա-
ւահանգստի երկարութեամբ, բայց այդ պարսպի
ու ծովի արանքում տարածւում է ցամաքի մի
շերտ: Առաքաւստանաւը կանգնեց Սուրբ Գէորգի
դարպասի մօտ և այն տեղի մաքսատան ծառա-
յողները կարճատե խուզարկութիւն կատարելուց
յետոյ, երկու ճանապարհորդներին թողեցին քա-
ղաք:

Վանահայրը, որ քանիցս անգամ իւր վան-

քի գործերի համար եղել էր Կոստանդնուպօլ-
սում, և քաջ ծանօթ էր տեղերին, հաստատ քայ-
լերով էր գնում. իսկ Լեւը, հրհրոցի աղմուկի ու
անցնող սայլերի դղրոցի ձայնից վախեցած և
հոյակապ շինութիւնների տեսարանով յափշտա-
կուած, բռնել էր իւր ուղեկցի լայն դգեստից և
հետաքրքրութեամբ նայում էր ամեն կողմ: Նը-
րանք ծովից քաղաք բարձրացան քարքարոտ ու
նեղ փողոցներով և մօտան այն բաց հրապարակը,
որը շրջապատում էր Սոֆիայի հոյակապ տաճա-
րը, այն մեծ տաճարը, որ Կոստանդնուսոսն էր
սկսել, իսկ տաճարի օրհնութիւնը կատարուել էր
Սուրբ Ոսկերեքանի ձեռքով, և այդ տաճարի
հիմնարկութեան շնորհիւ, Կոստանդնուպօլիսը
դարձաւ արեւելեան եկեղեցւոյ կենտրոն ու պա-
տրիարքների աթոռանիստը: Բարեպաշտ վանահայ-
րը բազմիցս խաչակնքեց երեսը, մի քանի ան-
գամ ծուրը դրեց և վերջապէս սրբավայրի մօ-
տից անցնելով՝ շտապեց առաջ գնալ, որպէսզի
կարելի եղածին չափ շուտ կատարէ իւր դժուա-
րին գործը: Ուղևորները անցան մարմարեայ քա-
րերով սալաստակած փողոցով, աջակողմում տե-
սան ձիարշաւների հրապարակի ոսկեզօծ դար-
պասը, որտեղ խմբուել էր ժողովրդի հոծ բազ-
մութիւն, առաւօտեան եկեղեցական շքեղ հան-
դէսներին ներկայ լինելուց յետոյ այժմ եկել էր
այդ հրապարակը աշխարհային ուրախութիւննե-
րին մասնակցելու:

Աղգարնակութիւնը այնպիսի թափով ձգ-
ւում էր դէպի ձիարշաւարանը, որ եկուորները
մեծ դժուարութեամբ կարողացան դուրս գալ
այդ խոռնիճաղանձ ամբոխի միջից և ուղևոր-

ուեցան դէպի սե մարմարիոնից շինած ծանր կամարակապը, որ կազմում էր պալատի արտաքին դարպասը: Ներսւում կանգնած էր մի պահապան զինուոր, ոսկիզօծ սաղաւարտը գլխին ու շքեղ հագնուած. նա տեսնելով եկուորների դարպասից ներս մտնելը, իսկոյն կանգնեցրեց նրանց և իր փայլուն նիզակովը նրանց ճանապարհը փակելով արգելեց առաջ գնալ, մինչև որ սպան իրաւունք տուեց: Սակայն վանահայրը գիտէր, որ բոլոր արգելքները նրա առաջ կըխափանուին, եթէ նա յիշէ Բարսեղ ներքինու անունը, որ պալատական սենեկապետի պաշտօն էր վարում, և միևնոյն ժամանակ կայսերական ննջարանին դրան մօտ քնող պաշտօնեայ էր: Եւ յիշաւ՝ այդ միջոցը օգնեց հէնց որ պրոտասֆատարիի զօրեղ անունը հնչուեց, պալատական թիկնապահների գլխաւորը զինուորներից մէկին անմիջապէս հրամայեց տանել հրկու ուղեւորներին Բարսեղ ներքինու մօտ: Նրանք անցան միջին, յետոյ ներքին պահակախումբը և վերջապէս մօտան խակալան պալատը, հետեւելով իրանց հպարտ առաջնորդին, նրանք տեսան մէկը միւսից առաւել դերազանց և առաւել շքեղ զահաւորուած սենեակներ: Որ կողմը նայում էին, տեսնում էին մարմարիոն, ոսկի, թաւիշ, արծաթ, փայլուն մոզաիկա, գեղանկար քանդակներ, վարագոյրները Հայաստանի գործուածքներից էին և Հնդկաստանի մետաքսից, յատակների վերայ փռուած էին Արաբիայի գորգեր, կային իրեր Բալտիկ ծովից բերած սաթից պատրաստած. և այս ամենը հասարակ գաւառացի եկուորների

առաջ փայլում ու շողշողում էին այնպէս, որ վերջապէս նրանց աչքերը սկսեցին ծակծկիլ և նրանց զգացմունքը մարդկային այդ ամենահոյակապ բնակարանի փայլից ու փարթամութիւնից պղտորուեց: Եւ ահա ոսկեայ թիւերով ասեղնագործած վարագոյրները բացուեցին և զինուորը յանձնեց եկուորներին համր նեղրին, որը կանգնած էր վարագոյրի յետի կողմը: Այդ փոքրիկ սենեակում յետ ու առաջ ման էր գալիս ծանր, յաղթանդամ, մուգ կաշուով, ուռած հրեւսով մի մարդ. և հրեւսներ ներս մտան այդ սենեակը, նա շուտ եկաւ դէպի նրանց կողմը մի զգուշի ու սպառնական ժպիտով: Նա իւր հաստ շրթունքներով և կախընկած աչտիւով յիշեցնում էր մի ծերունի կնոջ պատկեր, բայց նրա դէմքի վրայ վառում էին մի զոյգ սև, խորամանկ և չար աչքեր, որոնք ընդունակ էին ուրիշի մտքերը կատարելապէս ուշադրութեամբ դիտելու ու ղըննելու:

— Դուք, սաաց նա, իմ անուան միջոցաւ մտաք պալատ:

— Ես պարծենում եմ այն բանով, որ ամեն ոք այդ միջոցով կարող է աշխատել ինձ հասնել: Իսկ նա, ով որ առանց յարգելի պատճառի կամ կարիք ունենալու աշխատում է գալ ինձ մօտ, այդպիսին կարող չէ բաղդաւոր լինել:— Եւ նա կրկին ժպտաց այնպիսի արտայայտութեամբ, որ սարսափած պատանին ուժգնօրէն սեղմեց վանահօր լսյն զգեստը:

Բայց վանահայրը քաջ ու կորովի մարդ էր: Նրան չէին վախեցնում ոչ բարձրաստիճան անձի չարագուշակ կերպարանքը և ոչ էլ նրա խօսքե-

րի մէջ հնչուող սպառնալիքները, ծերունին զնկ-
լով իւր ձեռքերը պատանի ուղեկցի ուսին, ժըպ-
տալով նայեց ներքինու վերայ:

— Ձերդ գերազանցութիւն, ասաց նա, ես
վստահութեամբ կարող եմ ասել, որ միմիայն իմ
գործի վեհութիւնը ինձ իրաւունք տուեց մտնել
պալատ: Ինձ միայն յուզում է այն միտքը, որ
իմ գործը չափազանց ծանրակշիռ ու խիստ կա-
րեւոր լինելու պատճառաւ չեմ կարող ոչ ձեզ
յայտնել և ոչ էլ ուրիշին, բայց միայն իրեն թէ-
ոգորա կայսրուն: Այս խօսքերի վրայ ներքի-
նին կախեց իր թաւամազ յօնքերը ու ասաց:

— Դուք ձեր ասածները պարտական էք
ճշտիւ կատարել:— Եթէ իմ մեծանուն ու ողոր-
մած Յուստինիանոս կայսրը չի արհամարհում և
հաւատալով յայտնում է ինձ իր բոլոր գաղա-
նիքները, զարմանալի է, որ ես չեմ կարող
ունկնդիր լինել նրա հպատակի գաղանիքներին:
Ձեր հագնուածին ու շարժումքին նայելով, ես
կարծում եմ, որ դուք ասիական վանքերից մէկի
վանահայրն էք:

— Դուք ճշմարիտ էք ասում, Ձերդ գերա-
զանցութիւն:

Ես Անտիօքի սուրբ Նիկիֆորի վանքի
վանահայրն եմ: Սակայն կրկնում եմ, որ ես ան-
միջոպէս պէտք է խօսեմ միմիայն Թէոդորա
կայսրուն հետ:

Ներքինին երբ լսեց այս խօսքերը, ուղղակի
ապշած մնաց և ծերունու հաստատակամութիւնը
դրդեց նրա ծայրայեղ հետաքրքրութիւնը: Նա
առաւել մօտեցաւ ծերունուն և կանգնեց նրա
առաջ երես առ երես: Նրա ուռած, հաստ և թուխ

ձեռները, որ նման էին սպունգի, զրուած էին
գեղին յասպի բարեայ սեղանի վերայ:

— Ծերուկ, արտասանեց նա,— չ'կայ աշ-
խարհումըս կայսրուն վերաբերող ոչ մի գաղ-
տնիք, որ կարելի չլինէր ինձ ասել: Եւ իմա-
ցէք, որ եթէ դուք չկամենաք լիովին ասել ինձ
ձեր գաղտնիքը, այն ժամանակ—դուք, իհարկէ
երբէք չէք կարող տեսնել թագունուն: Ուրեմն
ի՞նչ պատճառով ես ընդունեմ ձեզ, եթէ դուք
չէք բացատրում, թէ ինչ գործով էք գնում նրա
մօտ: Դուք կարող էք լինել մանիքիանների ա-
ղանդի հերետիկոս և ֆիլ իմանայ որ ձեր ծոցում
թագցրած չէք դաշոյն՝ կայսրուն սպանելու
նպատակով:

Վանահայրը դադարեց տատանուելուց:

— Եթէ ես մի որ և է սխալ գործեմ, թող
նա ձեր գլխին կատարուի, արտասանեց նա:—
Արդ, լսեցէք, այս պատանին, որի անունը Լէ է,
Թէոդորա կայսրուն հարազատ որդին է, որին
մեզ մօտ վանքում թողել էին սրանից տասը
տարի առաջ, մի ամսական հասակում: Առէք այս
պապիրուսի ծրարը, նա կհաստատէ իմ խօսքի-
րի բոլոր ճշմարտութիւնը:

Բարսեղ ներքինին անընդհատ նայելով Լէի
ևրեսին, բաց արեց ծրարը:

Նա թուցիկ ակնարկ ձգեց վաւերացիւթի
վրայ, և նրա դէմքի զծագրութեան վրայ արտա-
փայլեց զարմանք ու խորամանկ դիտաւորու-
թիւն, այդ անսպասելի նորութիւնը իր օգտին
դարձնելու:

— Այո, ճիշտ է, որ նա կայսրուն իսկա-
կան պատկերն է, բրթմնջաց ներքինին և յան-

կարծ հարցրեց կասկածելի եղանակով:

— Ասացէք խնդրեմ, այդ պատահական նամանութիւնը ձեր գլխում ծագած ծրագրի արդիւնք չէ՞ արդեօք:

— Ձեր հարցին, ասաց վանահայրը, միայն մի միջոցաւ կարելի է պատասխանել, եթէ ես սուտ եմ խօսում,—դուք իրան՝ կայսրուհուն հարցրէք, իսկ այժմ հաղորդեցէք ե ուրախացրէք նրան, որ նրա որդին կենդանի է և առողջ:

Ծերունու խօսակցութեան մէջ հնչուող անմեղ տոնը ու նրա անկեղծութիւնը, պապիրուսի ծրարն ու պատանու գեղեցիկ դէմքը փարատեցին ներքինու մտքում եղած կասկածանքի վերջին նշոյլը: Առիթը պատրաստ էր: Բայց դրանից խնայիսի օգուտ կարելի է բաղել: Բարսեղը կանգնած էր: Ըռնած իւր կզակից և խորամանկ կերպով խորհում էր այդ հարցի մասին:

— Ծերուկ,—ասաց նա վերջապէս,—այս գաղտնիքը շատե՞րը գիտեն:

— Բացի մեր վանքի Բարսոս սարկաւազից պատասխանեց վանահայրը, ամբողջ աշխարհում ոչ ոք չգիտէ լեւի ծագման մասին:

Ներքինին վճռեց, որ եթէ մենակ ինքն միայն իմանալու լինի լեւի ծննդեան գաղտնիքը, այն ժամանակ նա, զօրեղ ազդեցութիւն կունենայ իւր իշխող տիրուհու վրայ: Նա խորապէս համոզուած էր, որ կայսրը չգիտէ Թէոդորիայի որդու գոյութեան մասին, և այդ առթիւ, եթէ լուր ստանալու լինի, անկասկած նա մեծ հաւուած կստանայ, որը թերեւ կարող է ոչնչացնել իւր ամուսնու հետ ունեցած անձնուիրու-

թեան ու սիրոյ կապը: Հետեւաբար, կայսրուհին կարող է այդ առթիւ միջոցներ ձեռք առնել, որպէսզի լեւի մասին եղած լուրը չհասնէր Յուստինիանոս կայսեր ականջին. իսկ երբ նա ինքը Բարսեղը, կայսրուհու համախոհը կը դառնայ, այն ժամանակ նա, սերտ կերպով նրա հետ կը մօտենայ: Այդ բոլոր մտքերը արագութեամբ անցան նրա գլխով, քանի որ նա կանգնած և ձեռքում բռնած էր պապիրուսը և նայում էր երբեմն էլ պատանու վրայ:

Այստեղ սպասեցէք,—ասաց ներքինին ու գնաց:

Անցաւ մի քանի րոպէ: Վերջապէս սենեակի ծայրում եղած վարագոյրը բացուեց և ներս մտաւ մի կարճահասակ ժիր ու եռանդուն կին, ոսկեթիւ շրջադգեստով, ուսին ձգած ունէր իշխանական քղամիդ, ոտքին էլ կայսերական ծիրանագոյն մուճակ: Այդ գոյնը ապացուցանում էր, որ նա կայսրուհի էր, իսկ նրա վեհութեան արժանաւորութիւնը, նրա սքանչելի ու սեւ աչքերի մէջ վառուող իշխանական զօրութիւնը և նրա հպարտ գէմքի գծագրութեան կատարեալ գեղեցկութիւնը ցոյց էին տալիս, որ այդ Թէոդորա կայսրուհին էր, և որը չնայելով իր հասարակ ծագմանը, դարձել էր ամբողջ պետութեան մէջ ամենավեհապանծ կինը: Նրա գէմքի վրայ այլևս չէին նկատուում այն ծաղրական ծամածոութիւնները, որը սովորել էր կրկեսում արջի պահապան Ակացիայի դուստրը. անյայտացել էր նոյնպէս նրա գէմքի առաջուայ գերադասող թիթեամիտ հմայիչ զօրութիւնը, իսկ այժմ նրանում ամեն ինչ ապացուցանում էր նրա վեհ

կառավարչունհի և մեծ կայսեր արժանաւոր ընկեր լինելը: Թէոդորան մօտեցաւ պատանուն, իւր սպիտակ ձեռները դրեց նրա ուսին, և երկարաւ և հարցական հայեացք ձգեց այսինքն այնպիսի հայեացք, որի մէջ սկզբում կասկածանք էր արտափայլում, իսկ յետոյ, հանդիպման ուրախութիւն փայլեց և նա նայեց որդու խոշոր ու փայլուն չքերի վրայ, որոնք երեացին նրան իւր սեպհական չքերի անդրադարձումը: Նա յանկարծ խիստ յուզուելով, գրկեց պատանուն և մի ակնթարթում սեղմեց իւր կրծքին: Իսկ յետոյ կայսրուհու իշխանական ոյժը յաղթեց մօր ժամանակաւոր թուլութիւնը. Թէոդորան իսկոյն յետ հրեց Լևին իրանից և օրապահ ստրուկներին նշան անելով հրամայեց հեռացնել սենեակից իրան այցելողներին:

Բարսեղ Կերբինին մնաց. նա նայում էր իւր տիրուհուն, որը յուզուած ընկած էր գահաւորակի վրայ և ծանր շունչ էր առնում: Թէոդորան բարձրացնելով իւր հայկաթքը՝ իւր կանացի բնազդովով վայրկենաբար կարգաց Կերբինու աչքերի մէջ թափնուող սպառնալիքը:

— Ես, ասաց կայսրուհին, հիմա քո իշխանութեան տակն հմ գտնուում.—կայսրը այս մասին ոչինչ թող չիմանայ:

— Ես ձեր հաւատարիմ ստրուկն եմ, —
 Կրկդիմի ժպիտով պատասխանեց Ներքինին: Եթէ
 դուք ցանկանում էք, որ կայսրը ոչինչ չիմա-
 նայ, թի կը համարձակուի ասել նրան:

— Հապա՞ արեղան ու տղան: Ի՞նչ անենք մենք:

— Կայ միայն մի ճանապարհ... — պատաս-

խառնեց հերքիհին:

Կայսրուհին սարսափած նայեց նրա վերայ: Ներքինին ձեռքերով յատակն էր ցոյց տալիս: Հոյակապ պալատի տակ կար մի ընդարձակ տա-
րածութիւն, որի անցքերը աղօտ լուսաւորուած էին, և այդտեղ ապրում էին կտրած լեզուներով անմոռնչ ստրուկներ, որոնք խաւարի մէջ յան-
կարձ աղաղակ ու ճիչ էին արձակում: Ահա թէ ինչպիսի տեղի վրայ էր մատնացոյց անում ներ-
քինին... Թէոդորայի հոգում առաջացել էր մի սարսափիկ կռիւ: Այս գեղեցիկ տղան, նրա որ-
դին էր, մարմինը նրա մարմնից էր, ոսկրը նրա ոսկրից... Նա այդ գիտէր: Նա նրա միակ դա-
ւակն էր և բոլոր սրտով փափագում էր նրան: Հապա Յուստինիանոսը: Կայսրուհին գիտէր
նրա տարօրինակ մարդ լինելը: Նա մոռացել էր
նրա անցեալ կեանքը: Նա նորան սրբեց իւր
կայսերական հրովարտակով. որ բոլոր պիտու-
թեան մէջ տարածուել էր, և որը ասում էր, թէ
նա նրա կամքի ուժով վերածնունդ է: Բայց
նրանք զաւակ չունէին և այդ տղայի կերպարան-
քը, որ իւր որդին չէր, մեծ ցաւ կպատճառէր
նրան: Յուստինիանոսը կարող էր մոռանալ նրա
անցեալ խայտառակ ու ամօթալի կեանքը, բայց
այս գեղեցիկ երեխան, որը նրա անցեալ կեան-
քի պտուղն էր, միշտ պիտի վշտացնէր կայսրին
և յիշեցնէր Թէոդորայի անցեալը: Կանացի բնաղ-
դը և կայսրին լաւ ճանաչելը կայսրուհուն թե-
ւազբուծ էին, որ մինչև անգամ նրա հմայիչ ոյ-
ժը և նրա մեծ ազդեցութիւնը չէին կարող փրկել
նրան և մինչև անգամ աղբիւրի հնդկամանքնե-
րում կարող է կորչել:

20553-60

Եւ Յուստինիանոսին էլ որքան հեշտ էր Թէ-
ողորային իւր կինը դարձնել, այնքան էլ հեշտ
էր նրանից բաժանուելը: Չնայելով, որ նա կայ-
սրունի էր, բարձր դիրք ունէր, այնուամենայ-
նիւ կարող էր ընկնել իր քարձրութիւնից, այն
ամենը, ինչ որ կարելի է աշխարհիս երեսին
ցանկանալ, նրա համար անյապաղ կատարուած
էր: Միթէ արժէր այս ամենը ոտնակոխ անել:
Եւ ի՞նչ բանի համար: Անարժան թուութեան և
անխելքութեան շնորհիւ իւր մէջ ծագած յան-
կարծական սիրոյ յոյգերի համար, որ դեռ առա-
ւօտեան լուռ էր:

Ուրեմն այդ երեխայի համար կարող էր
հա կօրցնել այնքան անզին բարիքներ:

— Դուք այդ բոլորը ինձ յանձնեցէք,—ա-
սաց թուխ և ուշադիր դէմքը դարձնելով դէպի
նա:

— Ուրեմն դրանց մահ...

— Այլ կերպ դուք ապահով չէք լինիլ: Իսկ
եթէ ձեր ողորմած սիրտը առաւել զգայուն է, այն
ժամանակ կարելի է նրանց կուրացնել և կամ
լեզուները կտրել. այդ բոլորին թաղուհին երե-
ւակայում է թէ ինչպէս երեխայի սիրուն աչքե-
րին մօտեցնում են շիկացած երկաթը և նա յան-
կարժ ցնցուեց...

— Ոչ, ոչ, առաւել լաւ է մահ քան այդ...

— Ուրեմն եթէ այդպէս է թող մեռնեն:
Մեծ կայսրունի, դուք իմաստուն կին էք, որով-
հետեւ ճշմարիտ ապահովութիւնը ու ճշմարիտ
լուսթիւնը միմիայն մահուան մէջ է ծածկուում:

-- Հապա աբեղան:

— Նոյնպէս:

— Իսկ Սուրբ Սինդղը: Չէ՞ որ նա մեծ քա-
հանայ է:

Ի՞նչ պիտի ասէ այն ժամանակ պատրիար-
քը:

— Հարկադրեցէք նրա շատախօս լեզուն
լռել, իսկ յետոյ, թող ինչ ուզում են անեն:
Մենք, ինչպէս պալատում ծառայողներ, կարող
էինք իմանալ, որ նա դաւադիր էր և բռնուեց
դաշոյնը թևի մէջ, իրօք այն մարդն էր, որը նա
ինքն իրան էր անուանում...

Նա կրկին ցնցուեց ու կրկին ընկաւ բար-
ձի վրայ:

— Այլիս այդ մասին մի խօսէք և մի մտա-
ծէք—ասաց ներքինին:—Միմիայն ասէք ինձ, որ
դուք այդ ամենը իմ կամքին էք թողնում: Իսկ
եթէ դուք անզօր էք այդ ասելու, այն ժամանակ
միայն գլխով արէք և ես այդ շարժումը համա-
ձայնութեան նշան կը համարեմ:

Այդ բոլորին Թէողորայի մտքով անցան
նրա բոլոր թշնամիների պատկերները, որոնք
նախանձում էին նրա քարձրութեանը և այն
թշնամիները, երբ տեսնէին, որ արջի պահապա-
նի դուստրը կրկին գլուխուց այն անդունդը, ո-
րից նրան բարձրացրել էին: Անշուշտ նրանց
ատելութիւնը ու արհամարհանքը կզօրեղանար
և նա ծաղր ու ծանակի առարկայ կդառնար:
Թէողորայի դէմքը յանկարծ փոխուեց, նա բար-
կութեամբ լցուեց, նրա շրթունքները սեղմուե-
ցին:

— Ինչոր կամենում էք արէք—ասաց նա:

Նոյն վայրկենին մահուան յայտարարի սոս-

կալի ժպիտը երեսին ներքինին դուրս եկաւ սե-
նեակից: Թէոդորան խորը հառաջեց և առաւել
խորը թաղուեց մետաքսեայ բարձի մէջ, կատա-
ղութեամբ սեղմելով ու պտտեցնելով նրան իր
ցնցուող ձեռներով:

Ներքինին ժամանակ չկորցրեց. նա այդ
ծանր գործը կատարելով կարող էր լինել Թէո-
դորայի գաղտնիքի միակ մասնակցողը և հետե-
ւաբար կլինէր միակ զօրեղ մարդը այն իշխող
բնաւորութեանը, կորացնողը ու ստրկացնողը:
Նա մտաւ այն սենեակը, որտեղ սպասուում էին
վանահայրը ու Լէը և այն չարագուշակ նշանը
տուեց, որ լաւ յայտնի էր այդ մոայլ օրերում:
Այդ չարագուշակ նշանի հետեանքն այն եղաւ,
որ այնտեղ կանգնած համր նեղերը բռնելով
վանահօրը ու Լէին հրեցին դէպի միջանցքը, որ
տանում էր պալատի յետին մուտքը, դէպի այն
մուտքը, որտեղ իւզալի կերակրների ծանր հո-
տը, ցոյց էին տալիս, որ այդտեղից հեռու չէր
խոհանոցը: Նրանք անցնելով կողքի միջանցքը,
մօտեցան ծանր սողնակով գոցուած երկաթեայ
դրանը. նա բացուեց, և այնտեղ երևաց բազմա-
թիւ պտոյտներով մի քարեայ սանդուխք, որը
լուսաւորուում էր պատի լամպերի աղօտ պլպլո-
ցով: Սանդիքի վերին ու ներքին տափակ քա-
րածների վրայ կանգնած էին համր պահապան-
ներ, որոնք նման էին սև ծառից շինուած ար-
ձանների. այնտեղ ներքեում, մութ և սարսափե-
լի կողքի սենեակների անցքերից, երևում էին
մի շարք որմնախորշեր. դրանցից ամեն մէկը ու
նէր իր պահապանը: Անբաղդ եկուորներին կոպիտ
կերպով քաշքշում ու տանում էին քարայտա-

կի վրայով, սարսափելի նեղ անցքերով, յետոյ
հարկադրեցին նրանց ցած իջնել միւս երկար
սանդուխքի վրայով, որը տանում էր առաւել ու
առաւել գետնի խորը. ծանր ու թանձր օդը, ան-
տանելի խոնաւութիւնը, ջրի կաթիլները, որ
ամեն կողմից կաթկթում էին, այս ամենը՝ ցոյց
էին տալիս, որ նրանք գտնուում են ծովի մակե-
րեայթից աւելի ցածր: Այն վանդակապատ դռնե-
րից. որոնց առաջից էին անցնում նրանք, լրա-
ւում էին հառաչանքներ ու աղաղակներ, որոնք
նման էին հիւանդ կենդանիների գոռում-գոչու-
մի, և ըստ այնմ կարելի էր դատել թէ որքան
մարդիկ այդ ստորերկրեայ բնակավայրի խոնաւ
ու թունաւոր մթնոլորտում անց էին կացրել ի-
րանց ամբողջ կեանքը...

Ստորին միջանցքի ծայրում կար մի դուռ
նրա յետեւում երևում էր մէկ կամարաձև սեն-
եակ, որ բոլորովին կահկարասիքից զուրկ էր.
միայն նրա մէջտեղում կար մի ծանր փայտե
տախտակ, երկաթով պատած: Նա կեցած էր ջըր-
հորի կոպիտ շինած քարէ պատի վրայ, որի վրայ
փորագրուած էր մի մակագիր, որ առնուած էր
արեւելքի հին գիտնականների ասացուածքներից:
Այս հին ջրհորը առաւել վաղ գոյութիւն ունէր,
քան Բիւզանդիոնը հիմնող յոյները, այսինքն այն
տարիները, երբ քաղաքացիք ու փիւնիկեցիք շի-
նում էին ահագին անտաշ և կոշտ քարից շէն-
քեր, Կոստանդնուպօլիս քաղաքի մակերևոյթից
աւելի ցած: Դուռը փակեցին. ներքինին մի ինչ
որ նշանով հրամայեց ստրուկներին ջրհորը ծած-
կող տախտակը վերցնել: Վախեցած պատանին
աղաղակեց և սեղմեց վանահօրը, որը հոգի գոյն

դարձած երեսով ու դողդողալով աղաչում էր խստասիրտ ներքինուն խղճալ իրանց վրայ:

— Իհարկէ, իհարկէ դուք չէք սպանիլ այդ անմեղ պատանուն.— Կանչեց նա:— Սխր դա ի՞նչ է արել, միթէ նա մեղաւոր է: Հարկ է մեղադրել միայն ինձ, ինձ և Բարտոս սարկաւազին: Եթէ հարկաւոր է մի որ և է մէկին պատժել— պատժեցէք մեզ: Մենք ծեր ենք, միւսնոյն է այսօր կամ վաղը պիտի մեռնենք: Բայց չէ՞ որ նա երիտասարդ է, չէ՞ որ նա անմեղ է, նա դեռ ապրել է ուղում: Խօսք նրան մտադիր չէք սպանելու: Այս ասելով նա ծունկ չորեց և պինդ սեղմեց ներքինու ոտները: Լիւր ազիւղորմ լալիս էր և սարսափած աչքերով նայում էր սե ստրուկների վրայ, որոնք վերցնում էին հնազարեան ջրհորի կափարիչը: Վանահօր բռնուն աղաչանքի պատասխանի փոխարէն, ներքինին առաւ ջրհորի կողքին եղած քարը և գցեց մէջը: Լսւում էր թէ ինչպէս այդ քարը խփուելով խոնաւ ու լորձով պատած հին ջրհորի պատերին, վերջապէս խուլ ձայնով ընկաւ մի ինչ հեռաւոր ստորերկրեայ լճակի մէջ: Սրանից յետոյ Բարսեղը կրկին նշան տուեց ձեռներով և սե ստրուկները յարձակուեցան պատանու վրայ և հեռացրին նրան ծերունուց: Լիւր այնպէս բարձրաձայն աղաղակեց, որ ոչ ոք չլսեց թէ ինչպէս մօտեցաւ Թէոդորա կայսրուհին: Նա իսկոյն մտաւ սենեակը և գրկեց իր որդուն:

— Այդ անկարելի է և կարող չէ կատարուել:— Կանչեց Թէոդորան:— Ո՛հ, ո՛հ, մի՛ վախե՛նար իմ թանկագին զաւակս, նրանք քեզ ձեռք չեն տալ: Ես անխիլը եի, անգութ ու չար, որ

այդպիսի բան էի վճռել...

Ո՛հ, իմ սիրելի որդեակ: Ո՛հ, սոսկալի է մինչև անգամ մտածել, թէ քո մայրը կարող էր իրան քո արեան մէջ թաթախել...

Ներքինու դէմքը խոթողուեց. նա տեսնում էր, որ իր ծրագիրը քանդոււմ է կանացի քմահաճոյքի շնորհիւ:

— Ինչո՞ւ դրանց սպանել, իմ վհապանծ տիրուհի, եթէ դա ձեր սրտին խոր վիշտ ու ցաւ պիտի պատճառէ— ասաց ներքինին:— Դանակով ու շիկացած երկաթով կարելի է նրանց ընդմիշտ անփափա դարձնել:

Կայսրուհին նրա խօսքերի վրայ ուշադրութիւն չը դարձրեց և դառնալով որդուն ասաց.

— Լի՛, համբուրիւր ինձ, թոյլ տուր ինձ, որ գէթ մի անգամ կեանքումս զգամ թէ ինչպէս իմ զաւակի փափուկ շրթունքները դիպչում են իմ բերնին: Մի անգամ էլ: Ո՛հ, ո՛հ, բաւական է, այլապէս ես անգոր կլլինեմ ասիլ և անել այն, ինչ որ դեռ հարկաւոր է: Ծերո՞ւկ, ասաց կայսրուհին, դու մօտ ես քո կեանքի վերջին օրերին, և նայելով քո յարգելի դէմքին ես չեմ կարող մտածել, որ քո շրթունքներից սուտ խօսք դուրս գայ: Դու այսքան տարուայ ընթացքում իրօք որ իմ գաղտնիքը պահել էիր: Այժմ թէ ոչ:

— Ճշմարիտ եմ ասում, որ պահել էի: Երգւում եմ մեր վանքի պաշտպան Ս. Ղուկասի անունով, որ բացի ծերունի Բարտոս սարկաւազից և ինձանից ոչ ոք ոչինչ չգիտէ:

— Ուրեմն կնքիւր կրկին քո շրթունքները: Եթէ դու անցեալում հաւատարիմ էիր, անկասկած ապագայում էլ հաւատարիմ կլինիս: Այս

ասելով, նա դարձրեց իր հրաշալի աչքերը դէպի որդուն տարօրինակ արտայայտութիւնով, որի մէջ խառնուել էին սէրը խստասրտութեան հետ և ասաց:—Իսկ դու, Լև, կարող եմ արդեօք ես քեզ հաւատալ: Դու կարող ես արդեօք պահել այդ գաղտնիքը քո մէջը, որը ոչ մի բանում օգուտ չի բերել քեզ, այլ միայն քո կորստեանը և քո մօր անկման պատճառ կը դառնայ:

— Ո՛հ, մայրիկ, ես քեզ փաստ չեմ պատճառիլ: Երդուում եմ, որ ես կը լռեմ...

— Հաւատում եմ ձեզ: Ձեր վանքը և դուք երկուսով կըստանաք ինձանից այնպիսի օգնութիւն, որը կը հարկադրէ ձեզ օրհնել այն օրը, երբ որ դուք մտաք իմ պալատը: Այժմ ազատ էք, գնացէք: Եւ ես այլեւս չըպէտք է տեսնեմ ձեզ: Հակառակ դէպքում դուք կարող էիք ինձ պատահել առաւել փափուկ տրամադրութեան տակ և կամ առաւել խստասիրտ, առաջինը առիթ կը տար իմ կորստեան, ի՞նչ երկրորդը՝ ձեր: Բայց երբ իմ ականջին հասնի լուր, եթէ ինձ մէկը շնչայ, որ դուք ինձ մատնել էք, այն ժամանակ դուք երկուսդ էլ կը կորչէք ձեր արեղաներով ու ձեր վանքով, և այս կորուստը լաւ դաս կը լինի ամենքի համար, ով որ կայսրուհու հաւատարմութեան երգմնազանց կը գտնուի:

— Ես չեմ ասիլ,—ասաց ծերունի վանահայրը,—չեն ասիլ նոյնպէս Բարտոս սարկաւազը և Լևը: Ես ամենքի համար կարող եմ երաշխաւորել: Բայց այստեղ կան ուրիշներ, այդ ստրուկները և Բարսեղը, կարող են դրանք ուրիշի մեղքը մեզ վրայ զցիլ:

— Ո՛հ,—պատասխանեց կայսրուհին և նրա

աչքերը յանկարծ բորբոքուեցին:—Այդ ստրուկները համբ են, նրանք ոչ մի կերպ չեն կարող տարածել այն գաղտնիքը, որը նրանց յայտնի է: Իսկ Բարսեղը,—և նա իր սպիտակ ձեռքով տուեց այն նշանը, որով ներքինին դեռ նոր էր մահուան դատապարտել ծերունուն ու պատանուն, Սև ստրուկները յարձակուեցան նրա վերայ այնպէս, ինչպէս շները եղջերուի վրայ:

— Ո՛հ, ողորմած և թանկագին տիրուհի, այս ի՞նչ է: Այս ի՞նչ է: Դուք այդ կարող չէք հրամայիլ,—սկսեց աղաղակել ներքինին, խղճալի ու կտրուած ձայնով:—Ես ի՞նչ եմ արել: Ինչո՞ւ ես պէտք է մեռնեմ:

— Դու ինձ գրգռեցիր իմ սեպհական արհամարհմամբ: Դու ուզում էիր իմ գաղտնիքը իմ վրայ գործադրել: Ես այդ կարգացի քո աչքերի մէջ, կարգացի հէնց սկզբից: Անգութ ու ստոր մարդասպան, ինքդ կրիր այդ պատիժը, որ դու ուրիշներին համար էիր պատրաստել: Դու ինքդ քեզ կորուստի մատնեցիր: Ես ամեն ինչ ասացի:

Կայսրուհին լսեց և կրկնեց իր խորհրդաւոր նշանը համբ ստրուկներին:

Ծերունին ու պատանին սարսափած դուրս ելան կամարած և սենեակից, որտեղ նրանք ծանր տանջանքներ ու փորձութիւններ էին կրել: Երբ որ նրանք քիչ յետոյ յետ նայեցին, անմիջապէս տեսան ոսկեհոտ շրջադրացու մէջ փայլող անողորմ կայսրուհուն և նրա մօտ ջրհորի կանաչ պատը և ներքինու բացած մեծ ու կարմիր բերանը, որը աղաղակում ու պաղատում էր այն բոլորին, երբ լարուած ոյժերով ստրուկներին իրաւաւոր շիւրջը քայլը մօտեցնում էր նրան անխու-

սափելի մահուան: Նրանք ձեռներով փակելով
 իրանց ափանջները, հեռացան մի կողմ, բայց
 շարունակ լսում էին կարծես մի ինչ որ կանա-
 ցի ճիչ, իսկ յետոյ մի ուժգին կոհակի ցայտում
 մի ինչ որ տեղում, հեռում, ստորերկրեայ խա-
 ւար անդնդում...

Ահա այսպիսի վախճան ունեցաւ անհոգի ու
 անգուժ Բարսեղ ներքինին:

Վ Ե Ր Զ



Թարգմանչի հասցեն՝

Нахичевань на Дону, 25 линія, д. № 29.

Свящ. Н. Боснакіанцъ.

7656

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL1605692

